ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 12 >> փետրվարի 2013թվականի N 6 -Ն

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 198 –Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և 63-րդ հոդվածով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Գյումրի համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2013թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի հաշվեկշռվածությունը հաստատելու մասին>> N 198-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը գումարով՝ 95856.1 հազ. ՀՀ դրամ, որից վարչական մաս՝ 81324.4 հազ. ՀՀ դրամ, ֆոնդային մաս՝ 14531.7 հազ. ՀՀ դրամ, ուղղել 2012թվականին ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերին՝ առկա պարտավորությունների կատարմանը: Վարչական մասի 81324.4 հազ. ՀՀ դրամ մնացորդից 27630.0 հազ. ՀՀ դրամը թողնել վարչական մաս, իսկ 53694.4 հազ. ՀՀ դրամը ուղղել ֆոնդային մաս:

2. Բյուջեի եկամուտների մեջ ըստ տարեսկզբի բազայի ճշտումների կատարել փոփոխություն՝ ավելացնել փոխադրամիջոցների համար գույքահարկը՝ 26904.1 հազ. ՀՀ դրամ, իրավաբանական և ֆիզիկական անձանց շինություններից գույքահարկը՝ 1809.8 հազ. ՀՀ դրամ:

Ընդամենը գույքահարկը ավելացնել՝ 28713.9 հազ. ՀՀ դրամ, 2013թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի մեջ կատարել համապատասխան ուղղում՝ համաձայն NN 1-2 հավելվածի, որի արդյունքում՝

Եկամուտները՝ 3101638.1 հազ. ՀՀ դրամ,
Ծախսեր՝ 3197494.2 հազ. ՀՀ դրամ:

Կողմ (19) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Գ.Ադամյան_____

Ա.Բաղեյան_____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե.Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

Տ.Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ